

# ՈՐՈՇՈՒՄ

## ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. դեկտեմբերի 4-ի նիստի

(արձ. N5)

1. 2016-2017 ուս. տարվա զարնանային քննաշրջանի արդյունքները համարել բավարար,

1.1 հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին առաջիկա 10 օրերի ընթացքում համապատասխան ֆակուլտետների դեկաններին ներկայացնել տվյալներ 2017-2018 ուս. տարվա ավարտական աշխատանքների ընթացքի և անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախահաշվի վերաբերյալ ռեկտորատի առաջիկա նիստում քննարկելու համար,

1.2 առաջիկայում հրավիրել ռեկտորատի ընդլայնված նիստ՝ կուրսերի դեկավարների մասնակցությամբ:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին միջոցներ ձեռնարկել ուսման վարձերը հավաքագրելու ուղղությամբ,

2.1 ընդառաջել Թատրոնի ֆակուլտետի IV կուրսի ուսանողներ Գևորգ Հայրապետյանին, Ինգա Աբաջյանին, Հայարփի Զուռնայանին, Մարիամ Կնյազյանին, Լուսինե Ֆերոյանին և թույլատրել ուսման վարձը մուծել իրենց դիմումներում նշած ժամկետներում:

3. ՈԱԿ-ի ղեկավար Է. Հակոբյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և ձեռնարկել միջոցներ նշված թերությունները վերացնելու ուղղությամբ,

3.1 Ուս.-գիտ աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանի գլխավորությամբ քննարկել և ստեղծել կիսամյակային քննությունների ընթացքը վերահսկող հանձնաժողովներ,

3.2 հանձնարարել ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին տրամադրել նյութեր ինստիտուտի կայքում տեղադրելու համար,

3.3 հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին պատրաստել Արցախի հետ համագործակցության համաձայնագրի տեքստը,

3.4 հանձնարարել ռեկտորի օգնական Հ. Իսրայելյանին կազմել և ռեկտորատի հաստատմանը ներկայացնել ինստիտուտի կողմից հրատարակված Ջ. Ներսեսյանի «Բեմական խոսքի տեխնիկա» մեթոդական ուղեցույցի բաշխման նախագիծը:

**Գլխարտուղար**

**Գ.Հովհաննիսյան**